ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Անտառների պետական հաշվառման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի հունվարի 31-ին ժամը 15:18:48-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 2-ին ժամը 15:00-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Տեխնիկական բնութագրի համաձայն «Կազմակերպության կողմից ձեռքբերված արբանյակային պատկերները կարող են լինել աշխատանքների մեկնարկից առավելագույնը մեկ տարի վաղեմության, բարձր լուծաչափի պանխրոմատիկ (նվազագույնը 0.5մ) և բազմասպեկտրալ (նվազագույնը 2.0մ) արբանյակային պատկերներ»: Խնդրում ենք պարզաբանել «Կարող են լինել» բառակապակցության իմաստը: Արդյո՞ք կարող ենք եզրակացնել, որ դրանք ցանկալի են, բայց ոչ պարտադիր: Խնդրում ենք նաև հաշվի առնել, որ ուսումնասիրության ենթարկվող տարածքների համար հնարավոր է չլինեն վերոգրյալ լուծաչափով և վաղեմության բազմասպեկտրալ արբանյակային պատկերներ: Ինչպե՞ս պետք է վարվենք նման դեպքի ժամանակ:

Հարցադրում N 2: Տեխնիկական բնութագրի աղյուսակ 2-ի 26-րդ կետի համաձայն անհրաժեշտ է Կադաստրային քարտեզներից անտառների քանակական բնութագրերի մշակում: Խնդրում ենք պարզաբանել ի՞նչ քանակական բնութագրերի մասին է խոսքը:

Հարցադրում N 3: Տեխնիկական բնութագրի աղյուսակ 2-ի 31-րդ կետի համաձայն անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքը՝ «Առնվազն 100 (հարյուր) հատ ուղեցույցի մշակում՝ ուսուցման հետ կապված նյութերի ընդգրկմամբ»: Խնդրում ենք տրամադրել մանրամասներ ուսուցման շրջանակի վերաբերյալ, արդյո՞ք կան ստանդարտներ ուղեցույցի մշակման համար, թե այն պետք է մշակվի ընթացիկ աշխատանքների բնույթից ելնելով:

Հարցադրում N 4: Խնդրում ենք տրամադրել պարզաբանում Տեխնիկական բնութագրի աղյուսակ 1-ում ներկայացված անտառտնտեսությունների մակերեսների վերաբերյալ: Վայոց ձորի անտառտնտեսության անտառկառավարման պլանի մշակման աշխատանքների իրականացման շրջանակում կատարվել է անտառտնտեսության սահմանների ճշգրտում ու արձանագրվել է անտառտնտեսության մակերեսը՝ 19531.2 հա: Մշակված անտառկառավարման պլանն արժանացել է ՇՄԱԳ դրական եզրակացության, սակայն վերոգրյալ աղյուսակում ներկայացված մակերեսը զգալիորեն տարբերվում է այդ ցուցանիշից: Խնդրում եմ տրամադրել պարզաբանում, արդյո՞ք առկա են այլ հակասություններ այլ անտառտնտեսությունների մակերեսների միջև և Կատարող ընկերությունը յուրաքանչյուր անտառտնտեսության դեպքում ի՞նչ մակերես ընդգրկող տարածքի համար պետք է իրականացնի աշխատանքը:

Հարցադրում N 5: Խնդրում ենք պարզաբանել ի՞նչ է ներկայացնում Օրինակելի ձև 8-ի աղյուսակում նշված «Առաջադրանքը տարիների միագումարով», արդյո՞ք այն պետք է ներկայացնի անտառկառավարման պլանով նախատեսված առաջադրանքը, թե «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից իջեցված առաջադրանքը:

Հարցադրում N 6: Խնդրում ենք ներկայացնել Օրինակելի ձև 9-ի «տոկոս» սյունակը ո՞ր ցուցանիշին է վերաբերում, արդյո՞ք դա առաջադրանքի նկատմամբ կատարողականի տոկոսն է, որը ցույց կտա թե որքանով է այն կատարված:

Հարցադրում N 7: Ի՞նչ է ներկայացնում Օրինակելի ձև 10-ի աղյուսակի «հիմնադրված անտառմշակույթների տեսակները»: Խնդրում ենք հստակեցնել արդյո՞ք նկատի ունեք խառը թե մաքուր, համատարած թե մասնակի, նախնական, ենթասաղարթային, հաջորդող թե տնկադաշտային:

Հարցադրում N 8: Խնդրում ենք պարզաբանել Օրինակելի ձև 2-ի, 20-ի, 21-ի աղյուսակների տվյալները ո՞ր ժամանակահատվածի տեղեկատվություն պետք է ներկայացնեն, արդյո՞ք պետք է ներկայացվի ըստ ներկա անտառկառավարման պլանի ցուցանիշների:

Հարցադրում N 9: ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի «Անտառային պետական կադաստրի վարման և անտառների պետական հաշվառման ու տվյալների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 133-Ն որոշման 2-րդ գլխի 27-րդ կետի 8-րդ մասի համաձայն անտառների պետական հաշվառման ենթակա տվյալներ են հանդիսանում տարիքային դասի փոփոխությունները վերջին անտառաշինությունից հետո՝ ըստ գերակշռող անտառի տիպերի (անտառաճման պայմանների) և լրիվության խմբերի: Արդյո՞ք սա ենթադրում է, որ բացի ներկաանտառկառավարման պլանի և նախորդ անտառկառավարման պլանի, պետք է իրականացվի նաև անտառաշինությունից հետո առկա փոփոխությունների գնահատում: Այս դեպքում հակասություն է առաջանում տեխնիկական բնութագրին կից օրինակելի ձևի աղյուսակների միջև, քանի որ ըստ վերոգրյալի աշխատանքների իրականացման ժամանակ պետք է ուսումնասիրվեն և բացահայտվեն փոփոխությունները ներկա և նախորդ անտառկառավարման պլանների միջև:

Պարզաբանում N 1-9: Պարզաբանման հարցման արդյունքում լրամշակվել է տեխնիկական բնութագիրը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:

Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով